3-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

3-միավորանոց առաջադրանքներ

1. Ըստ ժողովրդական ասացվածքի՝ գյուղն ի՞նչը կկոտրի, եթե կանգնի:

Ա) ոտք
Բ) գլուխ
Գ) գերան
Դ) փայտ

2. *Ի՞նչ են գաղտնագրել նկարները.*

Ա) կծիկ
Բ) կատու
Գ) կրակ
Դ) կռիվ

3. Անտառում հանդիպեցին երկու կենդանի.
— Ողջո՛ւյն, ծուռթա՛թ,— ասաց մեկը:
— Բարև՛, շլդի՛կ,— պատասխանեց մյուսը:
Ո՞ր կենդանիներն էին հանդիպել:

Ա) գայլը և նապաստակը
Բ) աղվեսը և արջը
Գ) գայլը և աղվեսը
Դ) նապաստակը և արջը

4. Բառաշարքում ո՞րն է ավելորդ.

<<համեղ, ուժեղ, ասեղ, զորեղ>>

Ա) համեղ
Բ) ուժեղ
Գ) ասեղ
Դ) զորեղ

Վերահրատարակումը միայն "Քոնթենտ Ռ թույլտվությամբ

5. Պատասխանի տարբերակներում բերված կետադրական նշաններից որո՞վ կարող են ավարտվել հայերեն նախադասությունները:

Ա) !
Բ) :
Գ) ?
Դ) Բոլոր նշաններով էլ կարող են ավարտվել:

6. Հագուստի տեսակներից քանիսի՞ անունն է առաջացել մարդու մարմնի մասի անունից:

<<Կոշիկ, գլխարկ, ձեռնոց, տաբատ, շապիկ>>

Ա) մեկի
Բ) երկուսի
Գ) երեքի
Դ) չորսի

7. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

Ճուտ - կուտ - կում - - համ - հավ

Ա) կուժ
Բ) ծամ
Գ) ժամ
Դ) հում

8) Բառաշարքում ո՞րն է ավելորդ.

<< մսագործ, ձեռագործ, պանրագործ, գորգագործ >>

Ա) մսագործ
Բ) ձեռագործ
Գ) պանրագործ
Դ) գորգագործ

Վերահրապարակումը միայն "Քոնթեստս Լաբ"-ի թույլտվությամբ

9. Եթե հակառակ նշանակություն ունեցող բառերից զույգեր կազմես, ապա մի բառ կավելանա: Ո՞րն է այդ բառը:

<< *թեթև, երկար, վերև, ձախ, կարճ, ցածր, աջ, ծանր, ներքև* >>

Ա) երկար
Բ) ձախ
Գ) ցածր
Դ) ներքև

10. Քանի՞ 3-տառանի բառ կարելի է կազմել Ա, Տ, Ղ տառերով՝ յուրաքանչյուր տառ օգտագործելով միայն մեկ անգամ:

Ա) 2
Բ) 3
Գ) 4
Դ) 5

4-միավորանոց առաջադրանքներ

11. Ի՞նչ է գաղտնագրվել տառաշարքում.

<< *խեայբղատայբլյունինիքե* >>

Ա) խաղավար
Բ) խորամանկ
Գ) խելացի
Դ) խաղալիք

12. Այդ տառը ավելացնելով ԱՐ բառի սկզբից՝ կստանանք նոր բառ: Նույն տառը ավելացնելով ԱՐ բառի վերջից՝ կստանանք ուրիշ նոր բառ: Ո՞ր տառն է դա:

Ա) Ն
Բ) Կ
Գ) պ
Դ) ջ

Վերահրապարակումը միայն "Քոլեկտիվ Լաբ"-ի թույլտվությամբ

13. Պատասխանի տարբերակներից ո՞րն ունի և՛ *ձեռքի մաս*, և՛ *շախմատային հաղթանակ*, և՛ *խաղողի վազի ոստ* նշանակությունները:

Ա) ճկույթ
Բ) բազուկ
Գ) հարված
Դ) մատ

14. Եթե տառաշարի յուրաքանչյուր տառը փոխարինես այբուբենում դրան նախորդող տառով, ի՞նչ բառ կստանաս.

<< ռչշբկբս >>

Ա) օրնիբուն
Բ) տոնածառ
Գ) տեղական
Դ) ցանկապատ

15. Ի՞նչ է հնարամտորեն թաքնվել բառաշարքում:

<< *փիղ, ծաղիկ, քիթ, մորի, կաթիլ* >>

Ա) փեթակ
Բ) փուչիկ
Գ) փաթիլ
Դ) ձյուն

16. Գաղտնագրված բառերից ո՞րն է ավելորդ։

<< *վահ, կուձ, դաբ, տիծ* >>

Ա) վահ
Բ) կուձ
Գ) դաբ
Դ) տիծ

17. Պատասխանի տարբերակների տառազույգերը հարևաններ են, բացի մեկից: Ո՞ր տառազույգում հարևաններ չկան:
Ա) Կ և Հ
Բ) Մ և Ն
Գ) Շ և Ո
Դ) Պ և Ջ

Վերահրատարակումը միայն "Քննություն Լաբ"-ի թույլտվությամբ

18. Ըստ օրինաչափության՝ ո՞ր տառը պիտի լինի -ի փոխարեն:

Սար (դ) աս

Պար (*) աղ*

Ա) կ
Բ) դ
Գ) ճ
Դ) ք

19. Արսենը գրատախտակին արև նկարեց, Անին՝ անտառ, Դավիթը՝ դահուկ: Ի՞նչ նկարեց Նարեն:

Ա) նուռ
Բ) նիզակ
Գ) նավակ
Դ) նշենի

20. Այբբենական կարգով դասավորվելու դեպքում պատասխանի ո՞ր տարբերակը կլինի երկրորդը:

Ա) սառնամանիք
Բ) փաթիլ
Գ) տոնածառ
Դ) ձնեմարդ

5-միավորանոց առաջադրանքներ

21. Բերված նախադասության մեջ քանի՞ բառում գրության սխալ կա:

Բարձրաբերց լեռներից բխում էր մի աղբույր, որի սառնորակ ջուրը հագեցնում էր ճամբա ընկած պապագ անցորդներին:

Ա) 3
Բ) 4
Գ) 5
Դ) 6

Վերահսկողությունը միայն "Քոնթենտս Լաբ" -ի թույլտվությամբ

22. Ո՞ր բառը պետք է լինի հաջորդը, որպեսզի բառաշարքը մեղուներին պատսպարի.

<< ափ, երե, թերթ, կապա, ______ >>

Ա) կարապ
Բ) բարդի
Գ) անտառ
Դ) գնդակ

23. Ո՞վ է հնարամտորեն թաքնվել բառաշարքում.

<< դղյակ, րոպե, արվեստ, մետաղ, երեկո, նկարիչ, ձայն >>

Ա) ձյունե հերոս
Բ) հայ արքա
Գ) նկարիչ
Դ) բանաստեղծ

24. «*Ներկվեցին*» բառում թաքնվել է *վեց* թիվը: Քանի՞ թիվ է թաքնվել բերված նախադասության մեջ:

> *Վարպետ Անաստասը ներկում էր վերանորոգվող տան պատերը, որոնք պատված էին մետաքսանման ձայնամեկուսիչ նյութով:*

Ա) 3
Բ) 4
Գ) 5
Դ) 6

25. Ի՞նչ թիվ է թաքցրել մեղվիկը:

երբ — 4
երկ — 4
ամառ — 4
մկրատ — 6
ևս —

Ա) 5
Բ) 4
Գ) 3
Դ) 2

Վերահրատարակումը միայն "Քենգուրու Լար" -ի թույլտվությամբ

26. Փոքրիկ թզուկը խաղում էր բառերով: Նա «*մետր, սունկ, դաշտ, անօրեն*» բառերից յուրաքանչյուրի առաջին տառը փոխարինելով միևնույն տառով՝ նոր բառեր էր ստանում: Ամենաշատը քանի՞ նոր բառ կարողացավ ստանալ թզուկը:

Ա) 1
Բ) 2
Գ) 3
Դ) 4

27. Աղյուսակի մի անկյունից սկսելով և որոշակի օրինաչափությամբ շարժվելով՝ կկարդաս մի շատ «կարևոր» բառ: Ո՞ր տառն է պետք տեղադրել դատարկ վանդակում:

*	ի	մ
ր	ա	կ

Ա) ն
Բ) յ
Գ) ղ
Դ) ու

28. 8 թիվը մեծ է 7 թվից, բայց «*յոթ*» բառն ավելի շատ տառեր ունի, քան «*ութ*» բառը: Ուրիշ ո՞ր զույգն ունի այդպիսի օրինաչափություն:

Ա) 1 - 2
Բ) 4 - 5
Գ) 5 - 6
Դ) 9 - 10

Վերահրատարակումը միայն "Քոնթենտս Լաբ"-ի թույլտվությամբ